Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն

Փակ Բաժնետիրական Ընկերության

2020-2025 թթ. Զարգացման Ծրագիր

Առաքելությունը

1. Խորհրդային Հայաստանը Խորհրդային Միության տասնյոթ հանրապետություններից առաջինը և միակն էր, որտեղ, հիսուն տարի առաջ, հիմնվեց Գեղագիտության ազգային կենտրոնը, որն իր ստեղծման առաջին իսկ օրվանից դարձավ հայ մանուկների և պատանիների՝ արվեստի բոլոր ճյուղերին և ընդհանուր առմամբ մշակույթին մերձենալու, նրանց ստեղծագործական շնորհքն ու նախասիրությունները բացահայտելու և զարգացնելու կառույց և երկար տարիներ, իր մարզային մասնաճյուղերի հետ միասին, միակն էլ մնաց: Այս Կենտրոնում ուսանած և կրթված սաներից շատերը երեկվա և այսօրվա Հայաստանի մշակութային և մտավորական դաշտի ներկայացուցիչներ են:

2. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը, ինքնին ձևավորվելով և կայացած լինելով կառույցի գործունեության մեջ ներգրավված բարձրակարգ արվեստագետ-դասավանդողների, վարպետների և մշակութային այլ գործիչների ջանքերով, միևնույն ժամանակ արվեստի և մշակույթի ոլորտում կրթել և ուղղություն է տվել իր սաներին՝ դրանով իսկ նպաստելով ոչ միայն մանուկների ու պատանիների մշակութային գրագիտության, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, այլև խորհրդային տարիներին հայաստանյան մշակութային դաշտի ընթացիկ և հետագա ձևավորմանն ու լիարժեք կայացմանը:

3. Ունենալով մանկական գեղագիտական կենտրոնի ուղղվածություն, կենտրոնի առաքելությունը մշտապես եղել է կրթամշակութային դասավանդման միջոցով հայ մանուկների գեղագիտական ճաշակի ձևավորմանը, նրանց ստեղծագործական հմտությունների բացահայտմանն ու զարգացմանը, արվեստասեր և ստեղծագործող սերունդներ դաստիարակելու գործընթացին, մանկական ստեղծագործունեության դաշտում միջազգային կապերի հաստատմանը նպաստելը:

4. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի, ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ արտասահմանյան այլ երկրների հետ հաստատած կապերի և միջազգային համագործակցության արդյունքների վկայությունները տարբեր հավաքածուների և պատկերագրքերի, գրքույկների

տեսքով ամրագրված են Կենտրոնի արխիվում, ինչն ամուր հիմք է դարձել կառույցի գործունեության վավերացման համար:

5. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում գործում են «Փոքր Թատրոնը» և «Մետրո» թատրոնը: «Փոքր թատրոնը» Հայաստանի նորարարական թատերախմբերից մեկն է, որը գործում է շուրջ քսան տարի: Մի շարք հեղինակավոր միջազգային կատարողական արվեստի փառատոնների մասնակցած և բազմաթիվ մրցանակների արժանացած «Փոքր թատրոնի» առաքելությունն է՝ ստեղծել հնարավորություն անկախ, ստեղծագործական աշխատանքի համար և ծառայել որպես տարբեր կրթական ծրագրեր իրականացնող հարթակ թատերական արվեստի ուսումնասիրությամբ հետաքրքրվող պատանիների և երիտասարդների համար: Իսկ 1992 թվականին հիմնադրված «Մետրո» թատրոն-ստուդիան, որի բեմում հանդես են եկել թատերական աշխարհի հայտնի դեմքեր, հաճախակի է մասնակցել տարբեր թատերական ստուգատեսների, փառատոնների, հեռուստանախագծերի:

6. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ 1981 թվականին հիմնադրված Մանկական ֆիլհարմոնիայի գործունեությունը մշտապես ուղղված է եղել մանուկների երաժշտական և պարային դաստիարակության զարգացմանը: Ֆիլհարմոնիայի կոլեկտիվները համերգային ծրագրերով ելույթ են ունեցել հանրապետության ամբողջ տարածքում և Խորհրդային Միության հանրապետություններում, իսկ նրանցից շատերը հայ ինքնատիպ արվեստը ներկայացրել են ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իտալիայում, Դանիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Բուլղարիայում և այլ երկրներում: «Գորանի» համույթը ներկայացնում է Հայոց պատմական շրջանների և գավառների ավանդական երգն ու պարը: Խումբը համերգային գործունեությանը զուգահեռ մասնակցել է հանրապետական և միութենական փառատոների և ֆորումների՝ արժանանալով բազում պատվոգրերի և մրցանակների, դափնեկրի կոչման:

7. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող Ազգային նվագարանների 7-ամյա երաժշտական դպրոցն (հիմնադրվել է 1982թ.-ին) իր բնույթով միակն է հանրապետությունում, որտեղ գործում են ազգային նվագարանների այնպիսի բաժիններ, ինչպիսիք են դուդուկ, շվի, զուռնա, պկու, սրինգ, թառ, ուդ, քամանչա, քանոն, սանթուր, դհոլ, ժողովրդական երգ, ժողովրդական պար, ինչպես նաև՝ «Տկզար» հնագույն նվագարանների անսամբլը: Դպրոցն այսօր էլ մասնակցում է բազմաթիվ հանրապետական մրցույթների՝ գրավելով լավագույն տեղեր:

8. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում գործող պարարվեստի ստուդիայի դասավանդման հիմքում ընկած է ազգային պարը, սակայն ավանդական պարի կողքին զարգանում են պարային նոր ձևեր, յուրացվում են թատերական արվեստի ժամանակակից սկզբունքներ: Իսկ ստուդիայի հիմքի վրա ստեղծված պարային թատրոնը հայ ժողովրդի ազգային մշակույթի առանձնահատկություններն արտահայտելու հնարավորություն է տալիս:

9. Խորհրդային միության փլուզումից հետո, Հայաստանի անկախության երեսուն տարիների ընթացքում, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը զրկված է եղել կրթամշակութային ոլորտում պետության սահմանած առաջնայնությունների քաղաքականությունից՝ շարունակելով գործել Խորհրդային միության կրթական ծրագրերի և սխեմաների հիմքի վրա, ինչը որոշակիորեն նվազեցրել է կենտրոնի գործունեության արդյունավետությունն այս տարիների ընթացքում:

10. Այսօր էլ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կրթական ծրագրերը արդիականացված չեն, գործում են ոչ լիարժեք, անցյալում եղած համակարգի չափորոշիչներով՝ զրկված լինելով 21-րդ դարում կրթական, մշակութային և արվեստի ոլորտում ակնկալվող զարգացման միտումներից:

11. Այս առումով, 2018 թվականի թավշյա հեղափոխությունը լավագույն գրավականը և հիմքը կարող է դառնալ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի՝ իր հիսունամյա գործունեությունն ամփոփելու, ձեռքբերումներն ու բացթողումները վերագնահատելու և վերաարժևորելու, դրական տեղաշարժեր ապահովելու ուղղությամբ աշխատելու, իր շահառուների և սաների ապագան կերտելու և ՀՀ նոր քաղաքացի ձևավորելու հնարավորություն ստանալու համար:

Տեսլական

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն առաջիկա հինգ տարիների ընթացքում կդառնա Հայաստանում առանց տարիքային, մասնագիտական, մարզային, տարածքային և այլ, այդ թվում նաև՝ ներառական սահմանափակումների հանրության բոլոր շերտերին հասանելի կրթամշակութային, գեղագիտական կրթության և ստեղծագործական գործունեության հարթակ՝ մանկական գեղագիտական դաստիարակության կենտրոնից վերաձևավորվելով ընդհանուր, միասնական և գործուն արդիականացված կառույցի՝ իր տեղային և միջազգային գործունեությամբ նպաստելով նաև հայաստանյան ժամանակակից

արվեստի դաշտի շարունակական ձևավորմանը, կայացմանն ու հանրահռչակմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն իր գործունեությունը կկառուցի պետական և մասնավոր հատվածների ամուր և արդյունավետ համագործակցության հիմքեր ստեղծելու միջոցով:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն առանձնահատուկ ուշադրություն կդարձնի գործունեության իր բոլոր ոլորտներում, բոլոր ծրագրերում և միջոցառումներում ներառականության ապահովմանը՝ հիմնվելով «Փոքր թատրոնի»՝ 2013 թվականին հաջողված նման փորձի վրա և տարածելով այն իր կրթամշակութային բոլոր ծրագրերում, գործունեության բոլոր ոլորտներում և կենտրոնի կազմում գործող բոլոր բաժիններում ու մարզային մասնաճյուղերում:

Այդ ամենի համար Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն ունի որոշակի նախադրյալներ և ներուժ: Այնուամենայնիվ, կենտրոնի արդյունավետ գործունեության ապահովումը, ընդլայնումը և նշված այլ բարեփոխումները լիարժեքորեն հնարավոր է իրագործել միմիայն Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կանոնադրական, կառուցվածքային և համակագային փոփոխությունների շնորհիվ:

Ռազմավարությունը

Բարձր գնահատելով Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի դերն ու նշանակությունն իր գոյության հիսուն տարիների ընթացքում հայաստանյան մշակութային ու արվեստի դաշտում և արժևորելով այդ տարիներին կատարված անգնահատելի աշխատանքը, միևնույն ժամանակ ամրագրելով անկախության ժամանակահատվածում կենտրոնի գործունեության զգալիորեն նվազած արդյունավետությունը, հույժ կարևոր ենք համարում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կանոնադրական, կառուցվածքային և համակարգային փոփոխությունները՝ հատկապես հղում կատարելով կառավարության՝ կրթամշակութային ոլորտում որդեգրած քաղաքականությանը:

2020 թվականին Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնն ամփոփում է հիսուն տարվա ընթացքում կատարած աշխատանքն ու գործունեությունը և, հատկապես կենտրոնի ղեկավար կազմի փոփոխության շնորհիվ նաև, մշակում և ներկայացնում է իր՝ առաջիկա հինգ տարվա ընթացքում իրականացվելիք և ծավալվելիք գործունեության հիմնախնդիրները, առաջնային ուղղությունները և վերջնական նպատակներն ու ակնկալիքները:

Ըստ այդմ, ելնելով գրվածից, ներկայացնում ենք նշված փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտության հիմնավորումները:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության հիմնավորումները

1. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի համար առաջարկվող կառուցվածքային փոփոխությունները ներառում են ինչպես մասնագիտական արվեստանոցների, ուսումնաստեղծագործական բոլոր հարթակների, այնպես էլ վարչական հատվածի վերագնահատում, օպիտմալացում և վերաբաշխում՝ ժամանակի թելադրանքին և կրթական ոլորտում տեղի ունեցող զարգացման միտումներին համապատասխան:

2. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխություն կատարելու ամենաառաջնային նպատակը պետության ենթակայությամբ գործող և ժամանակին մեծ համբավ վայելող Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի վարկանիշի ու նկարագրի վերականգնումն է, որը սրտացավ արվեստագետների և արվեստի նվիրյալների շնորհիվ խորհրդային տարիներին հեղափոխականի համբավ ուներ:

3. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի այսօր գործող կառուցվածքը և հաստիքացուցակը արգելք են երիտասարդ, նոր հմտություններին արհեստավարժ տիրապետող մասնագիտական կադրեր ներգրավելու և նոր կրթական, մասնագիտական մեթոդներ կիրառելու համար:

4. Տեղական ծրագրերի աչքի ընկնող սակավությունը և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի երբեմնի համբավի կորուստը պատճառ են դարձել, որ ծնողները նախընտրում են, որ իրենց երեխաները Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն հաճախելու փոխարեն մասնավոր կենտոններ այցելեն, որոնք մասնագիտական դասավանդման և կրթական մեթոդներով խիստ զիջում են կենտրոնին:

5. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում դասավանդման մեթոդն ու բնույթը պետք է համապատասխանեցվի 21-րդ դարում կրթական ոլորտում առկա միջազգային չափորոշիչներին՝ հնարավորություն ընձեռելով Կենտրոնի ուսանողներին դասընթացներն

ավարտելուց հետո ստանալ այնպիսի ավարտական վկայական, որը կճանաչվի նաև միջազգայնորեն՝ հետագա կրթությունը նաև Հայաստանից դուրս ստանալու համար:

6. Վարչական հատվածի փոփոխությունը խստորեն փոխկապակցված է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող բոլոր արվեստանոցների, ուսումնաստեղծագործական հարթակների և մարզային մասնաճյուղերի գործունեության կառավարման արդիականացման հետ:

7. Տարիների ընթացքում կտրվել է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի և արվեստագետների, ինչպես նաև Կենտրոնի կազմում եղած մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների միջև կապը, համագործակցությունը, փորձի փոխանակումը, շփումը: Այս կառուցվածքում այսօր չկան անհրաժեշտ այն հաստիքները, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ապահովել արվեստի կառավարումը, կենտրոնի և վերջինիս գործունեության հանրայնացումը: Այն միտված չէ այսօր դաշտում տեղի ունեցող փոփոխությունները կենտրոնի կազմում գործող մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների կյանք ներգրավելուն:

8. Մասնագիտական արվեստանոցները և ուսումնաստեղծագործական հարթակները վերջին երեսուն տարվա ընթացքում տեխնիկապես չեն արդիականացվել ու վերազինվել. մինչ օրս այնտեղ օգտվում են այն սարքավորումներից ու մասնագիտական պարագաներից, որոնք ձեռք են բերվել ու օգտագործվել են դեռևս անցած դարի յոթանասուն – ութսունական թվականներին:

9. Կան նաև արվեստանոցներ, որոնք այսօր անգործության մատնված՝ պարզապես ֆիզիկապես մաշվում և ավերակի են վերածվում: Մինչդեռ դրանք վերականգնելու և վերագործարկելու դեպքում հնարավոր կլինի ոչ միայն ուսանողների համար մասնագիտական հմտությունները զարգացնելու և ամրապնդելու լրացուցիչ ու հիմնավոր հարթակ ստեղծել, այլև հանրության լայն շերտերին արվեստի ու մշակույթի ոլորտում որոշակի ստեղծագործական գործունեություն ծավալելու հնարավորությամբ ապահովել:

10. Կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխությունը հնարավորություն կտա ըստ ոլորտների միավորել մասնագիտական մի քանի արվեստանոցներ և ուսումնաստեղծագործական հարթակներ՝ օպտիմալացնելով վերջիններիս

աշխատանքն ու նրանց միջև համագործակցություն և արդյունավետություն ապահովելով:

11. Առաջարկվող փոփոխությունների շնորհիվ հնարավոր կլինի նաև նոր արվեստանոցներ և ուսումնաստեղծագործական հարթակներ հիմնել, որտեղ կդասավանդվեն նաև արվեստի արդիական ճյուղեր (վիդեոարտ, լուսանկարչություն, գրաֆիկական դիզայն և նորաձևություն):

12. Տարիների ընթացքում, երկրի ոչ բարենպաստ տնտեսական իրավիճակով պայմանավորված, կտրվել է գործնական կապը մարզերում գործող մասնաճյուղերի և երևանյան՝ գլխամասային կենտրոնի միջև: Նոր կառուցվածքի շնորհիվ, մարզային կառույցներն ավելի կառավարելի կդառնան և նրանց գործունեությունն ավելի արդյունավետ ու նպատակային կլինի: Վերականգնելով Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի հետ մարզային կառույցների կապը՝ միաժամանակ հիմքեր կդրվեն նաև նրանց միջև փոխհամագործակցության համար:

13. Առաջարկվող կառուցվածքային փոփոխությունների շնորհիվ հնարավոր կլինի մարզերում արվեստի որոշ ճյուղերի դասավանդման շեշտադրում անել (օրինակ՝ վիզուալ արվեստ):

14. Անկախության ժամանակահատվածում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի՝ Հայաստանից դուրս հանրահռչակմանն ու ճանաչմանն ուղղված միջոցառումները, կարելի է ասել, բացակայել են, իսկ Հայաստանի և միջազգային դաշտում գործող արվեստագետների համագործակցությունը զգալի նվազել է՝ կառուցվածքում և հաստիքացուցակում նշված ուղղությամբ նպատակաուղղված գործող մասնագետների բացակայությամբ պայմանավորված:

15. Առաջարկվող կառուցվածքային փոփոխությունները և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի փոփոխված կանոնադրությունը վերջինիս ղեկավարությանը ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ստեղծելու հնարավորություն կտան, ինչը կնպաստի կառույցի բազմաճյուղ, արդյունավետ և անընդմեջ գործունեության ապահովմանը, և հայթայթված գումարներով հնարավոր կլինի կատարված աշխատանքի չափին և որակին համապատասխան վարձատրել նաև կենտրոնի աշխատակիցներին, դասավանդող կազմին, որոնք, միանշանակ, լինելու են պրոֆեսիոնալներ:

16. Վերջին տարիներին Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գործունեության արդյունավետության սրընթաց նվազման արդյունքում նույն կերպ նվազել է նաև վերջինիս՝ պետության կողմից ֆինանսավորման չափաբաժինը, ինչը նույնպես կենտրոնում որակյալ և բարձրակարգ մասնագետների բացակայության պատճառ է եղել:

Հաշվի առնելով և խիստ կարևորելով նաև այն պատմական փաստը, որ 2020թ. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը նշում է իր 50-ամյա հոբելյանը, առավել քան կարևոր և հրատապ ենք համարում, արժևորելով կենտրոնի 50 տարվա գոյությունն ու գործունեությունը, զարկ տալ և հիմք դնել կառուցվածքային, կադրային, բովանդակային, ռազմավարական, մշակութային և ֆինանսավորման քաղաքականության հիմնախնդիրների լուծման մեկնարկին, հնարավորինս արագ և հետևողական քայլեր ձեռնարկելով վերոնշյալ ուղղություններով:

Նպատակները

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն այսօր, քսանմեկերորդ դարում, խիստ կարևորելով Խորհրդային Հայաստանի կրթամշակութային ոլորտում ամրագրված և արդյունավետությամբ պսակված կրթամշակութային քաղաքականությունն ու ռազմավարությունը, ինչպես նաև ամրագրելով անկախ Հայաստանի կայացման տարիներին առկա խնդիրները, մարտահրավերներն ու անհրաժեշտ փոփոխությունները, հետամուտ է լինում կառուցվածքային, բովանդակային և աշխատանքնային ընթացակարգերի փոփոխությանը՝ նպատակ ունենալով.

1. վերաարժևորել, վերագտնել և վերահաստատել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի՝ որպես պետական կառույցի դերն ու նշանակությունը ՀՀ քաղաքացու ձևավորման և կայացման գործում,

2. վերականգնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի համբավը, վարկանիշը և երբեմնի նկարագիրը մշակույթի և արվեստի ոլորտում գործող պետական և մասնավոր կառույցների ու հաստատությունների շարքում,

3. ընդլայնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գործունեությունը ուսումնաստեղծագործական բոլոր հարթակների, մասնագիտական բոլոր արվեստանոցների լիարժեք գործարկման, համալրման և ժամանակակից արվեստի դաշտում այսօր պահանջարկ գտած արվեստի նոր ուղղությունները ներառելու միջոցով,

4. վերանորոգել ուսումնաստեղծագործական հարթակները՝ բեմերը, մասնագիտական արվեստանոցների տարածքները, դրանք ապահովել լուսաձայնային արդիական համակարգերով, ձեռք բերել նոր հաստոցներր և մասնագիտական գործիքներ (այդ թվում նաև՝ երաժշտական), համալրել ստեղծագործական անհրաժեշտ նյութերով ու պարագաներով, ինչպես նաև համապատասխանեցնել ցուցահանդեսային հարթակներին,

5. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում մշակել և գործարկել ինչպես մասնագիտական, այնպես էլ սիրողական և ընտանեկան ծրագրերի, դասընթացների, նախագծերի և միջոցառումների իրականացման առանձին փաթեթներ հանրության բոլոր շերտերի համար՝ առանց տարիքային սահմանափակման,

6. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում գործող ուսումնա-ստեղծագործական բոլոր հարթակներում (ժամանակակից արվեստ, կատարողական արվեստներ և երաժշտարվեստ) և կրթամշակութային ծրագրերում ընդգրկել հանրության լայն շերտերի ներկայացուցիչների՝ առանց տարիքային սահմանափակման,

7. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի շահառուների և հաճախող անձանց համար գործարկել հիմնական, ժամանակավոր և սիրողական կրթական խմբերի համակարգ,

8. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի՝ երևանյան գլխավոր գրասենյակի կողմից համակարգման և կառավարման միջոցով վերակազմակերպել և ակտիվացնել մարզային մասնաճյուղերի գործունեությունն ապակենտրոնացման քաղաքականության շնորհիվ, ինչը կարտացոլի պետական քաղաքականության առաջնայնությունները, ինչպես նաև որոշակիորեն կնպաստի մարզերում սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին,

9. առանձնակի ուշադրություն հատկացնել սահմանամերձ շրջաններում և բնակավայրերում ստեղծագործական, ուսումնական և կրթամշակութային եղած հարթակները վերագործարկելու և նորերը ստեղծելու գործընթացին,

10. որոշակիորեն ձևափոխել և վերակազմակերպել նաև տարեկան գործունեության բնույթը, տալով դրան տարբեր թեմատիկ ուղղվածություն, յուրաքանչյուր տարի ներկայացնելով նոր ծրագիր՝ համապատասխանաբար թարմացված հանրահռչակման փաթեթով և նյութերով (կարգախոս, գրքույկներ, պաստառներ և այլն),

11. իր գործունեության բոլոր ոլորտներում կարևորելով ներառականության ապահովումը՝ առաջարկվող կառուցվածքային և կանոնադրական փոփոխություններով այդ ուղղությամբ աշխատելու հիմքեր ստեղծել,

12. իր գործունեության կարևորագույն նպատակներից մեկը համարելով ներառականության ապահովումը և հիմնվելով «Փոքր թատրոնի» հաջողված փորձի վրա՝ տարածել այն կրթամշակութային բոլոր ծրագրերում, գործունեության բոլոր ոլորտներում և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում գործող բոլոր բաժիններում ու մարզային մասնաճյուղերում,

13. կարևորելով նաև միջազգային համագործակցությունը, դրա շրջանակում հայ և օտարերկրյա ճանաչված մասնագետների մասնագիտական շփումն ու փորձի փոխանակումը՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ուսումնաստեղծագործական հարթակներում պարբերաբար հանդիպումներ ու վարպետության դասեր կազմակերպել կենտրոնի սաների, հայ և օտարերկյա արվեստագետների միջև:

Ամփոփելով՝ նշենք, որ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն առաջարկվող փոփոխություններով իրականում հետամուտ է լինում այսօր անկախ Հայաստանի համար հույժ անհրաժեշտ կրթամշակութային կառույցի վերաձևակերպմանն ու վերաիմաստավորմանը: Միևնույն ժամանակ այն կարևորագույն հարթակ է դառնում կատարողական արվեստների (թատրոն, ժամանակակից և ազգային պար), երաժշտարվեստի և ժամանակակից արվեստի դաշտի ու այդ դաշտում գործող բոլոր անձանց համար:

Հատկապես ժամանակակից արվեստի ոլորտը մինչ օրս բացակայել է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի թե՛ գործառույթներից, և թե՛ ուշադրությունից: Վերջինիս արդիականացման առաջին գործուն քայլերից է ժամանակակից արվեստի ոլորտը ինչպես կրթամշակութային ծրագրերում, այնպես էլ առհասարակ իր գործունեության մեջ ներառելը, ինչը հայաստանյան ժամանակակից արվեստի դաշտը խթանելու, զարգացնելու, ակտիվացնելու և այդ դաշտում գործող արվեստագետների, ուսանողների, արվեստի սիրահաների՝ կենտրոնի շուրջ համախմբվելու ազդակ կհանդիսանա:

Հանրության հետ կապերի ամրապնդում, ՁԼՄ համագործակցություն

Արագ փոփոխվող աշխարհում խիստ կարևոր է ընտրված հաղորդագրությունների հստակ հասցեատերերի ընտրությունն ու փոխանցման ճիշտ թիրախավորումը, ինչի արդյունքում ասելիքն ու նպատակը կիրառելի ու արդյունավետ կլինեն: Այդ իսկ

պատճառով նախատեսվում է ողջ ծավալով կիրառել PR ժամանակակից գործիքներ, ինչպես նաև սերտ և արդյունավետ կերպով համագործակցել հայաստանյան և միջազգային լրատվամիջոցների հետ՝ ապահովելու համար հետևյալ կետերը.

1. Թարմացնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի դիմագիծը, ինչն առաջին հերթին կնպաստի, որպեսզի հանրության լայն շերտերն իրազեկված լինեն կենտրոնի ընդհանուր գործունեությանը, իրականացրած տեղական և միջազգային մշակութային նախագծերին, ուսումնաստեղծագործական հարթակների գործընթացներին, ինչպես նաև ներառական ծրագրերին, դրանց որակն ու բովանդակային մասը գնահատելու հնարավորություն ունենան:

2. Իրականացնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գործունեության հանրահռչակմանն ուղղված PR-արշավներ և այլ միջոցառումներ, որոնք կներառեն տեղեկատվության լայն սփռում ապահովելու համար անհրաժեշտ բոլոր գործիքները:

3. Վերստեղծել և վերաակտիվացնել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական կայքն ու սոցիալական հարթակները՝ կենտրոնի գործունեությանն ու իրականացված նախագծերին բոլոր հարթակներում հետևելու հնարավորություն ստեղծելով:

4. Հանգամանորեն աշխատել ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ մեդիա հարթակներում (հեռուստատեսություն, ռադիո, տպագիր և էլեկտրոնային պարբերականներ) նախատեսվող նախագծերի պատշաճ լուսաբանում ապահովելու նպատակով: Ըստ անհրաժեշտության կազմակերպել մամուլի ասուլիսներ/բրիֆինգներ՝ տեղեկատվություն փոխանցելու նպատակով: Այս ամենի արդյունքում պատրաստել թեմատիկ հաշվետվություններ և իրականացնել ԶԼՄ հրապարակումների մշտադիտարկում:

5. Հատուկ առիթների դեպքում նախագծել և իրականացնել համապատասխան գործողություններ, որոնք իրենց բնույթով առանձնահատուկ մոտեցում են պահանջում:

6. Թարմացնել տարբերանշանը և ստեղծել/տպագրել բրենդային գրքույկ և կրիչներ, ինչը Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գործունեության և տեսլականի թարմացման ընթացքը նաև վիզուալ հարթակներում տեսանելի դարձնելու հնարավորություն կտա:

7. Ըստ անհրաժեշտության ստեղծել մշակութային ամսագիր, որը ինչպես կրթական, այնպես էլ արվեստի հանրահռչակման կարևոր բաղադրիչ կունենա:

8. Ստեղծել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ընկերների ակումբ, որն իր շուրջը կհամախմբի ինչպես վերջինիս կայացման գործում ներդրում ունեցած անհատներին, այնպես էլ կդառնա արվեստագետների և արվեստասեր հանրության նախընտրած «հավաքատեղին»:

9. Համագործակցել միջազգային կրթական պորտալների և պարբերականների հետ, ինչը, վստահաբար, փորձի փոխանակման լավ հնարավորություն կդառնա:

10. Ստեղծել Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի և ենթակայությամբ գործող մասնաճյուղերի, մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների գործունեության լուսա/տեսային բովանդակություն (պահոց):

11. Ստեղծել տվյալների բազա, դասակարգել արխիվային նյութերը:

12. Հատուկ հոբելյանների և առիթների դեպքում ստեղծել գրքեր, գրքույկներ ու հաշվետվություններ, նկարահանել հեռուստատեսային ֆիլմեր, պատրաստել անիմացիոն և ճանաչողական հոլովակներ, իրականանել ֆոտոսեսիաներ:

13. Համագործակցել մշակութային, կրթական այլ, ինչպես պետական ու մասնավոր, այնպես էլ միջազգային կառույցների հետ:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի՝ առաջարկվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում առանձին բաժիններ ստեղծելու անհրաժեշտության հիմնավորում

Ելնելով Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում հիսուն տարի գործող ստորաբաժանումների և արվեստանոցների գործունեության արդյունքներից և հաշվի առնելով այսօր աշխարհում, հատկապես արվեստի դաշտում և կրթամշակութային կառույցներում գործող ռազմավարական միտումները, կիրառվող մեդոթներն ու կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ակտիվորեն կիրառումը, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը հետամուտ է լինում իր կազմում գործող ոլորտների և արվեստանոցների արդյունավետ ձևափոխման և նորերի ձևավորման՝ նոր ուսումնաստեղծագործական հարթակներ հիմնելու գործընթացին:

Առաջարկվող փոփոխություններով Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն իրականում հետամուտ է լինում այսօր անկախ Հայաստանի համար հույժ անհրաժեշտ կրթամշակութային կառույցի վերաձևակերպմանն ու վերահիմաստավորմանը՝ միևնույն ժամանակ կարևորագույն հարթակ դառնալով կատարողական արվեստների (թատրոն, ժամանակակից և ազգային պար), երաժշտարվեստի և ժամանակակից արվեստի դաշտի ու ոլորտում գործող բոլոր անձնաց համար:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի նոր կառուցվածքով առաջարկվում է **Գլխավոր գրասենյակի** կազմում առանձնացնել և գործարկել ստորև նշված հետևյալ բաժինները, որոնց, ըստ առանձնացված ոլորտների (**Ժամանակակից արվեստ, Կատարողական արվեստներ, Երաժշտարվեստ**), կենթարկվեն նաև գործող և նոր հիմնադրվող մարզային կառույցները.

Վարչական բաժին

1. Վերջին երեսուն տարվա ընթացքում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կադրային քաղաքականությունը և սահմանված վարչական պաշտոնները ակնհայտորեն խոչընդոտել են կենտրոնի գործունեության արդիականացման և արդյունավետության ապահովմանը:

2. Մասնագիտական հմտություններով օժտված և ժամանակին համընթաց վերապատրաստվող կադրերի բացակայությունը տարի առ տարի նվազեցրել է նաև կենտրոնի հանդեպ ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրային ուշադրությունը:

3. Անհիմն մեծ քանակով հաստիքների գոյության փաստը խոչընդոտ է եղել արհեստավարժ մասնագետներին բավարար վարձատրելու համար:

4. Ուսումնասիրելով վերջին տարիների փորձը և խիստ կարևորելով Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի դիմագծի, վարկանիշի և համբավի վերականգնման գործընթացը, կենտրոնը հետամուտ է լինում կադրային քաղաքականության օպտիմալացման, նպատակային հաստիքների ստեղծման և մշակույթի ոլորտում ճանաչված փորձառու և մասնագիտական կշիռ ունեցող մասնագետներ ներգրավելու գործընթացին՝ ապահովելով նաև համապատասխան վարձատրություն:

5. Հատկապես կարևորում ենք այսօր դաշտում գործող երիտասարդ կադրերի ներգրավումը՝ միաժամանակ առողջ սերնդափոխություն ապահովելու առումով:

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կառուցվածքում այսօր գործող ստորաբաժանումներն առաջարկում ենք վերախմբավորել հետևյալ բաժիններով՝ **Ժամանակակից արվեստի բաժին** *(տեսա-լսողական արվեստամիջոցների բոլոր ձևաչափերը, ներառյալ տեսարվեստ (վիդեո արտ),*

լուսանկարչություն, փերֆորմանս, ինստալյացիա և ոչ ավանդական կերպարվեստի այլ տեսակներ), **Կատարողական արվեստների բաժին** *(թատրոն, ժամանակակից և ազգային պար)*, **Երաժշտարվեստ** *(Ազգային նվագարանների 7-ամյա երաժշտական դպրոց, համույթներ)*: Գլխամասային գրասենյակի կազմում գործող այս երեք բաժիններից յուրաքանչյուրին կենթարկվեն նաև մարզային մասնաճյուղերի համապատասխան ուղղությունները, արվեստանոցները և ուսումնաստեղծագործական հարթակները: Յուրաքանչյուր ղեկավար, առաջնորդվելով կենտրոնի ընդհանուր քաղաքականության և ռազմավարության սկզբունքներով, ինքը կստանձնի կենտրոնի՝ տվյալ ոլորտի ամբողջ գործունեության ու ղեկավարման պարտականություններն ու պատասխանատվությունը, ամբողջությամբ հաշվետու կլինի ծավալված գործունեության համար, միևնույն ժամանակ նպատակասլաց գործունեություն կծավալի տվյալ բաժնի աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Յուրաքանչյուր բաժին վեր կհանի իր ոլորտում՝ կենտրոնի ենթակայությամբ գործող մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների խնդիրները, դրանց հիման վրա կմշակի համապատասխան քայլերը, կրթամշակութային տարեկան ծրագիրը նաև ոլորտի՝ մարզերում գործող մասնաճյուղերի համար, կառաջարկի թիրախային լուծումներ և իր պատասխանատվության տակ կառնի ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ դրանից դուրս կենտրոնի՝ տվյալ ոլորտում ծավալվող կրթամշակութային, արվեստի, տեղական համագործակցության, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ կապերի ընդլայնմանն ու դրանց ամրապնդմանն ուղղված քայլերը, կխթանի մարզ - մայրաքաղաք շփման հաճախականությունը և այսօր Հայաստանի համար այդքան անհրաժեշտ մշակութային քաղաքականության ապակենտրոնացման լավագույն օրինակը կհանդիսանա:

Մարզային կառույցները հրահանգները կստանան կենտրոնի՝ մայրաքաղաքում գործող տվյալ բաժնի ղեկավարությունից և համագործակցության միջոցով կիրականացնեն ոլորտի համար մշակված քաղաքականությունը:

Վարչական հատվածի փոփոխությունը խստորեն փոխկապակցված է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող բոլոր մասնագիտական արվեստանոցների, ուսումնաստեղծագործական հարթակների և մարզային մասնաճյուղերի գործունեության կառավարման արդիականացման, ինչպես նաև Կենտրոնի ներսում միջդիսցիպլինար համագործակցություն ապահովելու հետ:

Ժամանակակից արվեստի բաժին

(տեսա-լսողական արվեստամիջոցների բոլոր ձևաչափերը, ներառյալ տեսարվեստ (վիդեո արտ), լուսանկարչություն, փերֆորմանս, ինստալյացիա և ոչ ավանդական կերպարվեստի այլ տեսակներ)

1. Ժամանակակից արվեստի ոլորտը մինչ օրս բացակայել է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի թե՛ գործառույթներից, և թե՛ ուշադրությունից: Վերջինիս արդիականացման առաջին գործուն քայլերից է ժամանակակից արվեստի ոլորտը ինչպես կրթամշակութային ծրագրերում, այնպես էլ առհասարակ իր գործունեության մեջ ներառելը, ինչը հայաստանյան ժամանակակից արվեստի դաշտը խթանելու, զարգացնելու, ակտիվացնելու և այդ դաշտում գործող արվեստագետների, ուսանողների, արվեստի սիրահարների՝ կենտրոնի շուրջ համախմբվելու ազդակ կհանդիսանա:

2. Կարևորում ենք ուսումնաստեղծագործական հարթակների և մասնագիտական արվեստանոցների՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխան նյութատեխնիկական հենքի ստեղծումը, դրանց վերազինման խիստ անհրաժեշտությունը, քսանմեկերորդ դարում արվեստի, մշակույթի և կրթության ոլորտում կիրառվող մասնագիտական նյութերի, հաստոցների և այլ միջոցների ապահովման և դրանց՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան լինելը:

3. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող՝ ժամանակակից արվեստի ոլորտի մասնագիտական արվեստանոցները և ուսումնաստեղծագործական հարթակները վերաձևելու նպատակներից մեկն էլ վերջիններիս օպտիմալացումն է որոշների միավորման, նորերի ստեղծման և մարզային մասնաճյուղերում գործունեության որոշ տեսակների շեշտադրման միջոցով:

Ժամանակակից արվեստի բաժնի ենթակայությամբ կգործի նաև Գեղագիտության ազգային կենտրոնի թանգարանը (ԳԱԿ թանգարան):

ԳԱԿ Թանգարան

1. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում գործող Մանկական արվեստի թանգարանն առաջարկվող կառուցավածքային փոփոխությունների արդյունքում կվերափոխվի և կանվանվի ԳԱԿ թանգարան՝ դառնալով ժամանակակից արվեստի հարթակ ինչպես կենտրոնի, այնպես էլ մայրաքաղաքում ու մարզերում գործող արվեստագետների ու արվեստի սիրահարների համար:

2. Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը նախատեսում է ընդլայնել իր թանգարանային գործունեությունը՝ համակարգելով թանգարանի պահոցը, դասակարգելով հիսուն տարվա ընթացքում ձևավորված թանգարանային հավաքածուն, արխիվացնելով պատմական և փաստավավերագրական նյութերը:

3. Կձևավորվի թանգարանի գործունեության տարեկան ժամանակացույց, որը կներառի մշտական, ժամանակավոր, շրջիկ, մանկական, մարզային մասնաճյուղերի (հաշվետու), միջազգային, հոբելյանական ցուցահանդեսների շարք:

4. Թանգարանի հարթակը տարեկան մի քանի անգամ կտրամադրվի երիտասարդ արվեստագետներին՝ իրենց ստեղծարար ներուժն ու առաջին անհատական ցուցահանդեսները ներկայացնելու համար:

5. ԳԱԿ թանգարանն արվեստագետների, մշակութաբանների, արվեստի քննադատների, հրապարակախոսների հանդիպումների և քննարկումների հարթակ կդառնա:

6. ԳԱԿ թանգարանում մանկական արվեստի հավաքածուի առկայությունը և ժամանակակից արվեստի դաշտում թանգարանի գործունեության հեռանկարը սերունդների ստեղծագործական արդյունքների և փոխհարաբերությունների երկխոսության լավագույն համադրումը կարող է լինել:

7. Մանկական արվեստի և ժամանակակից արվեստի դաշտում այսօր գործող հայազգի և հրավիրյալ միջազգային ճանաչված արվեստագետների համագործակցությունն ու կենդանի շփումը ապագա նկարիչների, արվեստագետների կերտման գործում լավագույն գրավականը կլինի:

8. Նախաձեռնված կառուցվածքային փոփոխությունները նոր շունչ ու վարկանիշային նոր որակ կհաղորդեն մայրաքաղաքի առանցքային, անցուդարձով հագեցած փողոցում տեղակայված հիսունամյա թանգարանին՝ դարձնելով այն կրթամշակութային միջոցառումների կիզակետ և ժամանակակից արվեստի կենտրոն:

Կատարողական արվեստների բաժին

1. Կատարողական արվեստների բաժնի ենթակայությամբ, որը ներառում է թատերական արվեստը («Փոքր թատրոն» և «Մետրո» կատարողական արվեստների կենտրոն) և պարարվեստը (Ազգային պարարվեստի

համույթներ, ժամանակակից և ազգային պար), կսկսեն գործել առանձին ուսումնաստեղծագործական հարթակներ՝ համապատասխան մասնագիտական արվեստանոցներով:

2. Այս բաժնի կազմում առաջարկվող մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների ձևավորումն այլընտրանքային տարածք կապահովի Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնից դուրս համապատասխան ոլորտում գործող և ստեղծագործող ռեժիսորների, դերասանների, դրամատուրգների, բեմի նկարիչների, պարողների համար, որոնք հնարավորություն կունենան որպես հրավիրյալ վարպետներ, դասավանդողներ և մասնագետներ կիսվել մասնագիտական հմտություններով և ստեղծագործական գաղափարներով կենտրոնի շահառուների (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ), կառույցում ուսանող և աշխատող կայացած արվեստագետների և արվեստի սիրահարների հետ:

3. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող ***«Մետրո» կատարողական արվեստների կենտրոնը*** տեխնիկապես կվերազինվի, այդ թվում նաև ձայնալուսային համակարգերով, կհամալրվի վերջինիս տեխնիկական անձնակազմը, ինչի շնորհիվ, մյուս արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակներին նման, այն կդառնա այլընտրանքային տարածք, որը լավագույն հնարավորությունները կստեղծի կատարողական արվեստի ոլորտում գործող անձանց համար: Արդյունքում ***«Մետրո» կատարողական արվեստների կենտրոն*** ուսումնաստեղծագործական հարթակը հնարավոր կլինի տրամադրել թե՛ տեղացի և թե՛ արտասահմանյան արվեստագետներին, որոնք ցանկացած ժամանակահատվածով (երեք ամսիս, կես տարի և այլն) կվարձակալեն այն՝ իրենց գաղափարներն իրագործելու նպատակով: Ժամկետի ավարտին ստեղծված ներկայացման առաջնախաղը կլինի Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի նույն հարթակում:

Այլընտրանքային ուսումնաստեղծագործական այս հարթակը միևնույն ժամանակ կլինի նաև ներառական պարի կենտրոն, գործունեության հարթակ ինչպես վարպետության դասերի, այնպես էլ ներառական պարի ոլորտում մասնագետների, հոգեբանների, արտ-թերապևտների, արվեստագետների համար՝ այդպիսով հայաստանյան իրականության մեջ դառնալով ներառական արվեստի ուսուցման և զարգացման համար միակ մասնագիտական հարթակը:

4. Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում ստեղծվող Կատարողական արվեստների բաժնի կարևոր հատվածներից է ազգագրական պարի ուսուցման, մշակման և զարգացման ուսումնաստեղծագործական հարթակը, որի միջոցով կենտրոնն առանձնակի ուշադրությամբ հետամուտ կլինի ազգային ավանդույթների պահպանմանը՝ լավագույն հիմք ստեղծելով արդիական արվեստի ուղղությունների յուրօրինակ զարգացման և ազգային ինքնության ավանդական կապի միատեղման համար:

Երաժշտարվեստի բաժին

Երաժշտարվեստի բաժինը հնարավորություն կստանա շարունակելու և է՛լ ավելի ակտիվացնելու բեմական ստեղծագործական և ուսումնական հարթարկները, որտեղ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործում են Մանկական ֆիլհարմոնիան, հայոց պատմական շրջանների և գավառների ավանդական երգն ու պարը ներկայացնող «Գորանի» համույթը, իր բնույթով հանրապետությունում միակը հանդիսացող Ազգային նվագարանների 7-ամյա երաժշտական դպրոցը, որտեղ գործում են ազգային նվագարանների այնպիսի բաժիններ, ինչպիսիք են դուդուկ, շվի, պկու, սրինգ, թառ, ուդ, քամանչա, քանոն, սանթուր, դհոլ, ժողովրդական երգ, ժողովրդական պար):

Ֆինանսական բաժին

Ֆինանսական բաժին հիմնելու նպատակն է Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ֆինանսական հնարավորությունները ճիշտ վերաբաշխելու, լրացուցիչ աղբյուրներ հայթայթելու, ինչպես նաև այդ միջոցների կենտրոնացված կառավարումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Տնտեսական և տեխնիկական սպասարկման բաժին

Այս բաժնի գործունեությունն ուղղված կլինի Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գույքի կառավարմանը, վարչական և ստեղծագործական բաժիններն ու ոլորտը սպասարկող նոր մասնագետների ու կադրերի ներգրավմանը:

Հիմնավորումներ՝ այցելությունների քանակի ավելացման վերաբերյալ

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը Հայաստանի անկախությունից ի վեր չի արդիականացվել և վերջինիս նյութատեխնիկական հենքը չի թարմացվել: Ձեռք չեն բերվել տեխնիկական համապատասխան միջոցներ, հաստոցներ և անհրաժեշտ այլ սարքեր, նյութեր, իրեր, ինչի հետևանքով կենտրոնի արդյունավետությունը զգալիորեն նվազել է, իսկ վերջինիս շահառուների (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ), այցելուների և կրթական հատվածի մասնակիցների թիվն այսօր գոհացուցիչ չէ:

Անհրաժեշտ վերազինման, ինչպես նաև արվեստի նոր ու պահանջված ճյուղերի ներդրման արդյունքում ակնկալվում է մասնակիցների քանակի էական աճ ինչպես արտահայտված թվերով, այնպես էլ կենտրոնում ստացած կրթության առանձնահատկության մասով:

Ուսումնաստեղծագործական հարթակների շուրջ ակտիվություն ապահովելուց բացի, ակնկալվում է նաև այլընտրանքային բաղադրիչի ընդլայնում, ինչի արդյունքում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի դռները բաց կլինեն հանրության շատ ավելի լայն շրջանակի համար:

Մասնագիտական արվեստանոցների / ուսումնաստեղծագործական հարթակների ռազմավարական և ֆինանսական հիմնավորումներ

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը 50-ամյա հոբելյանի և նոր՝ 2021-2025 թթ. համար ձևավորվող Ռազմավարության շրջանակում հետամուտ է լինում իր ենթակայությամբ գործող մասնագիտական բոլոր արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների արդյունավետ և որակյալ գործունեության վերականգմանն ու արդիականացմանը:

Վերոնշյալ գործընթացի սահուն մեկնարկն ապահովելու նպատակով, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն իր գործունեության ուղղությունները միավորում է երեք հիմնական նոր բաժինների ներքո, որտեղ բոլոր արվեստանոցները և ուսումնաստեղծագործական հարթակները կգործեն ամբողջ ներուժով ու ծավալով:

- **Ժամանակակից արվեստի բաժին** (ԳԱԿ Թանգարան, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, տեսա-լսողական արվեստամիջոցների բոլոր ձևաչափերը, ներառյալ տեսարվեստ (վիդեո արտ), լուսանկարչություն, փերֆորմանս, ինստալյացիա և ոչ ավանդական կերպարվեստի այլ տեսակներ)

- **Կատարողական արվեստների բաժին** («Փոքր թատրոն», «Մետրո» կատարողական արվեստների կենտրոն, ազգագրական պար, ժամանակակից պար)

- **Երաժշտարվեստի բաժին** (Երաժշտական դպրոց - ազգային նվագարաններ և ժամանակակից գործիքներ, ազգային երգի ստուդիա)

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի երեք հիմնական նոր բաժինների ներքո գործող և նոր հիմնադրվող ուսումնաստեղծագործական հարթակների ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավման նպատակով ներգրավվելու են պետական, համայնքային, միջազգային, մասնավոր աջակիցներ, հովանավորողներ և ներդրումների ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ:

Վերջիններս ուղղակիորեն կնպաստեն մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների արդիականացմանը, տեխնիկական հագեցվածության ապահովմանն ու տարածքների վերանորոգմանը:

Ժամանակակից արվեստի բաժնի մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների վերակազմակերպում

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ մինչ օրս գործող մասնագիտական արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների արդիականացումն ու դրանց բեռնաթափումը պայմանավորված է վերջինիս շահառուների (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ) և այցելուների ակնկալվող քանակի աճով, ինչպես նաև եղած արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների տարածքների՝ ժամանակին համահունչ և օպտիմալ վերաբաշխման և հայաստանյան ու միջազգային կրթամշակութային, ստեղծարար ոլորտներում կենտրոնի ուրույն կարգավիճակն ապահովելու և ամրապնդելու նպատակով:

Ըստ այդմ Երևանում գործող մասնագիտական արվեստանոցները նախատեսվում է վերակազմակերպել հետևյալ կերպ և հետևյալ հասցեներով.

1. *Գեղանկար, գծանկար (Սարյան փող. 27, Բայրոն փող. 1/1, 23 տարածք)*
2. *Արվեստագետների կացարան (Սարյան փող.29)*
3. *Քանդակ, օբյեկտ, ինստալացիա (Սարյան փող. 33)*
4. *Գեղարվեստական տպագրություն (Սարյան փող. 31)*
5. *Ճապոնական արվեստ, օրիգամի, գեղագրություն (Սարյան փող. 35)*
6. *Գոբելեն, բատիկա (Բայրոն փող. 1/1, 23 տարածք)*
7. *Կարպետագործություն և տիկնիկագործություն (Բայրոն փող. 1/1, 23 տարածք)*
8. *Ճարտարապետություն, գրաֆիկական դիզայն, լուսանարչություն, տեսարվեստ, անիմացիա (Բայրոն փող. 1/1, 23 տարածք)*
9. *Խեցեգործություն, Հագուստի մոդելավորում, զարդարվեստ, ասեղնագործություն, (Մոսկովյան փող. 37)*

1. Սարյան 27, Բայրոն 1/1 – «Գեղանկար, գծանկար»

Հաշվի առնելով գեղանկարչության հանդեպ հայաստանյան հանրության շրջանում ձևավորված անվանդական սերն ու գնահատանքը և նկատի ունենալով նշված ոլորտում պահանջարկը, միևնույն ժամանակ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ 2005 թվականից Բայրոն 1/1 հասցեում գործող գեղանկարչության և գծանկարի համար մինչ օրս նախատեսված արվեստանոցների տարածքային սահմանափակությունը, Սարյան 27 հասցեում գտնվող արվեստանոցը վերակազմակերպվում է ***«Գեղանկար և գծանկար»*** ուսումնա-ստեղծագործական հարթակի: Լինելով մյուս բոլոր ոլորտների հիմնասյուն, հատկապես կարևոր է ***«Գեղանկար և գծանկար»*** արվեստանոցի տեղակայումը Սարյան փողոցում և կենտրոնի ենթակայությամբ գտնվող ուսումնաստեղծագործական մյուս հարթակների կողքին: Սարյան 27-ի շենքային և տարածքային պայմաններն առավելապես համապատասխանում են գեղանկարի և գծանկարի կրթական և ստեղծագործական ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով անհրաժեշտ լուսավորություն և կտավի հետ շփման անհրաժեշտ տարածություն:

2. Սարյան 29/61,62 – «Արվեստագետների կացարան»

Ժամանակակից արվեստի զարգացման միտումներին համահունչ՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտոնը Սարյան 29/61,62 հասցեում գտնվող արվեստանոցները վերակազմակերպում է ***«Արվեստագետների կացարան»*** ձևաչափին համապատասխան՝ «Արվեստագետների փոխանակման միջազգային ծրագրերի» շրջանակում:

Նշված ծրագրի շնորհիվ Հայաստան կայցելեն անվանի և մասնագիտական հմտություններով օժտված օտարազգի արվեստագետներ, որոնք կապրեն և կստեղծագործեն նշված հասցեում, միևնույն ժամանակ հնարավորություն կունենան աշխատել և վարպետության դասեր անցկացնել Կենտրոնի ենթակայությամբ գործող բոլոր արվեստանոցներում և ուսումնաստեղծագործական հարթակներում:

«Արվեստագետների կացարան» ձևաչափով Սարյան 29/61,62 հասցեում Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող երկու արվեստանոց - կացարանները մայրաքաղաքում կդառնան նաև հայ և օտարազգի արվեստագետների մասնագիտական և անձնական շփումների ու կարողությունների փոխանակման հարթակ:

«Արվեստագետների փոխանակման միջազգային ծրագրի» շրջանակում ամեն տարի Հայաստան կայցելի 3-5 արվեստագետ, որոնք ***«Արվեստագետների կացարանում»*** կեցությունն ավարտելուց հետո կենտրոնի ենթակայությամբ գործող թանգարանին (**ԳԱԿ թանգարան**) կնվիրաբերեն մեկական աշխատանք:

«Արվեստագետների կացարան» ձևաչափը և «Արվեստագետների փոխանակման միջազգային ծրագիրը» կնպաստեն Հայաստանի հանդեպ միջազգային հետաքրքրության աճին և Հայաստանի ժամանակակից արվեստի հանրահռչակմանը: Միևնույն ժամանակ օտարազգի արվեստագետների՝ «ԳԱԿ թանգարանին» նվիրաբերած աշխատանքների շնորհիվ կձևավորվի ժամանակակից

արվեստի նոր հավաքածու: Վերջինս, իր հերթին, տարեկան կազմակերպվող ցուցահանդեսների շրջանակում կներկայացվի հայաստանյան արվեստասեր հանրությանը:

3. Սարյան 33 – «**Ավանդական քանդակ, օբյեկտ, ինստալացիա**»

Ժամանակակից արվեստի զարգացման միտումներին համահունչ և դրա շուրջ ձևավորվող արվեստի ուղղությունների բազմազանությանը համապատասխան՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը **«Քանդակի»** արվեստանոցն արդիականացնում և վերակազմակերպում է ***«Ավանդական քանդակ, օբյեկտ և ինստալացիա»*** ուսումնաստեղծագործական հարթակի:

Օբյեկտ և իստալացիա ժամանակակից արվեստի ուղղությունների ներառումը ավանդական քանդակի արվեստանոցում ոլորտի զարգացման պատմության տրամաբանական շարունակությունն է: Վերջինս հնարավորություն է ընձեռում կենտրոնի շահառուներին (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ և այլն) ինչպես արվեստաբանական, այնպես էլ մասնագիտական պատկերացումներ կազմել քանդակի ձևամտածողության զարգացման միտումների վերաբերյալ:

«Ավանդական քանդակ, օբյեկտ և իստալացիա» մասնագիտական արվեստանոցը ուսումնաստեղծագործական նույն հարթակում կհամախմբի տարատեսակ նյութերով աշխատելու առանձնահատկությունները, դրանց կիրառման բազմազանությունը:

4. Սարյան 31 – «**Գեղարվեստական տպագրություն**»

Ավանդապես Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի հիմնադրման օրվանից ի վեր գործող *«**Գեղարվեստական տպագրության»***

արվեստանոցն այսօր իր ուրույն տեղն է գրավում մայրաքաղաքի՝ տվյալ ուղղությամբ զբաղվող արվեստագետների, ոլորտն ուսումնասիրող ուսանողների և օտարազգի արվեստագետների ու վարպետների համար: Վերջիններիս ներկայությունը կենտրոնի գեղարվեստական տպագրության արվեստանոում 2017 թվականից ձևավորվել է «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ՝ Հայաստանում առաջին անգամ և երևանյան միակ Գեղարվեստական տպագրության միջազգային բիենալեի շնորհիվ: Նշված արվեստանոցը և ուսումնաստեղծագործական հարթակն այսօր մայրաքաղաքում գործող գեղարվեստական տպագրության սակավաթիվ արվեստանոցների շարքում տեխնիկական հագեցվածությամբ երկրորդն է, սակայն առաջինն է տարածքի մեծությամբ և իր շուրջ ձևավորված միջավայրով:

2017 թ. մինչ օրս Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գեղարվեստական տպագրության արվեստանոցում «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության հետ համագործակցելով իրականացվել և իրականացվում են վարպետության դասընթացներ, որոնք տեղի են ունենում Գեղարվեստական տպագրության Երևանյան բիենալեի շրջանակում և վերջինիս նախապատրաստման ընթացքում: Բավական է նշել գերմանացի անվանի արվեստագետ Հերբերտ Մայերի և «Գեղարվեստական տպագրության Առաջին միջազգային բիենալե, Երևան 2017»-ի երկրորդ մրցանակակիր չին արվեստագետ Մինծիե Ճանի վարպետության դասընթացները, որոնք համախմբել էին մասնագիտական բուհերի ուսանողներին, հայ վարպետներին, օտարազգի և տեղաբնակ արվեստագետներին: ***«Գեղարվեստական տպագրության»*** արվեստանոցն իր ամբողջ հնարավորությունների սահմանում գործում է նաև այսօր՝ հետաքրքրված հայ ուսանողներին ու արվեստագետներին նախապատրաստելով 2021թ. Երևանում իրականացվող Գեղարվեստական տպագրության Երրորդ միջազգային բիենալեին:

5. Սարյան 35 – «Հիկարի» ճապոնական կենտրոն

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը հիմնադրման տարիներից ի վեր սերտ համագործակցել է Ճապոնյայի հետ՝ Հայաստանի և Ճապոնիայի միջև մանկական գեղագիտական դաստիարակության ոլորտում ձևավորելով ամուր և արդյունավետ կապեր, ինչի վկայությունն է այսօր Սարյան 35 հասցեում կենտրոնի ենթակայությամբ գործող ***Ճապանոկան արվեստի «Հիկարի» կենտրոնը***: Ուսումնաստեղծագործական այս հարթակում կենտրոնի շահառուներն (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ) ուսումնասիրում և սովորում են օրիգամիի արվեստը: Բարձր գնահատելով ճապոնական ավանդույթները մասնավորապես գեղագիտության բնագավառում և միջազգային մշակույթում, ինչպես նաև ճապոնական ձեռքբերումներն արվեստի բնագավառում, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը կառուցվածքային փոփոխության արդյունքում այս հարթակը համալրում է նաև ***«Գեղագրություն»*** ուղղությամբ: Վերջինս շնորհիվ կենտրոնի շահառուներն (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ) ու այցելուներն ուսումնասիրության ու ստեղծագործական ուղղության նոր ընտրություն կունենա:

«Հիկարի» ճապոնական արվեստի կենտրոնի հարմարավետ դահլիճը տարբեր դասընթացների և կենտրոնի այլ ծրագրերի ու միջոցառումների իրականացման համար լրացուցիչ մասնագիտական տարածք է:

8. Բայրոն 1/1 – «Ճարտարապետություն», «Գրաֆիկական դիզայն», «Լուսանարչություն, տեսարվեստ, անիմացիա»

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը, խիստ կարևորելով միջազգային արվեստի դաշտում այսօր առաջնայնություն ունեցող տեսաձայնային արվեստի ճյուղերը և թվային տեխնոլոգիաների մուտքն այս բնագավառ, հիմնում է արդի արվեստի նոր՝ ***«Տեսա-լսողական արվեստամիջոցների՝ տեսարվեստ***

(վիդեո արտ), լուսանկարչություն, անիմացիա» ուսումնաստեղծագործական հարթակ:

Միևնույն ժամանակ նոր հիմնադրվող ***Ճարտարապետական արվեստանոցն*** ուսումնաստեղծագործական խոշոր հարթակ կդառնա ինչպես սկսնակ, այնպես էլ ճանաչված ճարտարապետների համար, որոնց նախագծերը նոր ստեղծարար մտքի արգասիքը կլինեն:

9. Մոսկովյան 37 – «Խեցեգործություն», «Հագուստի մոդելավորում, զարդարվեստ, ասեղնագործություն»

Մոսկովյան 37 հասցեում գտնվող և 1980-ական թվականներից ի վեր գործող Խեցեգործության և Տեսարվեստի արվեստանոցների տարածքը նախատեսվում է ձևափոխել միջազգային չափորոշիչներին և ժամանակակից արվեստի ոլորտներում իրականացվող կրթամշակութային ծրագրերի պահանջներին համապատասխան և համալրել «***Հագուստի մոդելավորում, զարդարվեստ, ասեղնագործություն»*** ուսումնաստեղծագործական հարթակով:

Արդիականացված և մասնագիտական գործիքներով ու պարագաներով զինված այս հարթակը կարևոր նյութատեխնիկական հիմք կդառնա վերը նշված ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

«Հագուստի մոդելավորում, զարդարվեստ, ասեղնագործություն» նորաստեղծ արվետանոցն իր առաքելությունը կստանձնի հայկական ապրանքանիշի (brand) մշակման, նոր որակների ձևավորման և արտադրման գործում:

«Մետրո» կատարողական արվեստների կենտրոն

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող ***«Մետրո» կատարողական արվեստների կենտրոնը*** տեխնիկապես

կվերազինվի, այդ թվում նաև ձայնալուսային համակարգերով, կհամալրվի վերջինիս տեխնիկական անձնակազմը, ինչի շնորհիվ մյուս արվեստանոցների և ուսումնաստեղծագործական հարթակների նման այն կդառնա այլընտրանքային տարածք, որը լավագույն հնարավորությունները կստեղծի կատարողական արվեստի ոլորտում գործող անձանց համար: Արդյունքում ***«Մետրո» կատարողական արվեստների կենտրոն*** ուսումնաստեղծագործական հարթակը կտրամադրվի թե՛ հայ և թե՛ արտասահմանցի արվեստագետներին, որոնք ցանկացած ժամանակահատվածով (երեք ամիս, կես տարի և այլն) կվարձակալեն այն՝ իրենց գաղափարներն իրագործելու նպատակով: Ժամկետի ավարտին ստեղծված ներկայացման առաջնախաղը կլինի Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի նույն հարթակում:

Այլընտրանքային ուսումնաստեղծագործական այս հարթակը միևնույն ժամանակ կլինի նաև ***Ազգագրական, Ժամանակակից և ներառական*** պարի կենտրոն: Առանձնակի ուշադրություն դարձնելով ազգային ավանդույթների պահպանմանը և հիմք ստեղծելով արվեստի արդի ուղղությունների յուրօրինակ զարգացման և ազգային ինքնության ավանդական կապի միատեղման համար, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի այս ուսումնաստեղծագործական հարթակը լավագույնս կծառայի ինչպես թրեյնինգների, այնպես էլ ներառական պարի ոլորտում մասնագետների, հոգեբանների, արտ-թերապևտների, արվեստագետների համար՝ այդպիսով հայաստանյան իրականության մեջ դառնալով ներառական արվեստի ուսուցման և զարգացման միակ մասնագիտական հարթակը:

Ազգային նվագարանների 7-ամյա երաժշտական դպրոց

1982 թվականից Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի կազմում գործող Ազգային նվագարանների 7-ամյա երաժշտական դպրոցը գործունեության 38 տարիների ընթացքում իր տեսակով մնացել է եզակի ամբողջ հանրապետությունում: Այն միակն է, որտեղ դասավանդում են ազգային նվագարաններ՝ քանոն, քամանչա, ուդ, թառ, սանթուր, շվի, դուդուկ, դհոլ և այլն:

Դպրոցի աշակերտները պարբերաբար մասնակցում են միջազգային մրցույթ-փառատոնների և էական հաջողություններ գրանցում: Այն տարիներ շարունակ տվել է բարձրակարգ մասնագետներ, իսկ շրջանավարտների մի մասն էլ մասնագիտական ուսումը շարունակել է երաժշտական տարբեր քոլեջներում և բարձրագույն հաստատություններում: Նրանցից շատերն այսօր բավականին մեծ ճանաչում ունեն:

Դպրոցը, լինելով տեսականիով հարուստ ազգային նվագարանների ուսուցման միակ կառույցն ամբողջ հանրապետությունում, այսօր էլ ազգային ինքնության ու արվեստի պահպանման և դրա կարևորության գիտակցումը սերունդներին փոխանցելու անփոխարինելի հարթակ է:

Այսպիսով, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը, արդիականացնելով և վերակազմակերպելով մինչ օրս գործող և նոր հիմնվող ուսումնաստեղծագործական հարթակները, ձևավորում է սերունդների կրթամշակութային և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտ հիմքեր: Միևնույն ժամանակ հիմնում է ստեղծարար այլընտրանքային հարթակներ նաև մշակույթի ոլորտում գործող և արդեն կայացած հայ և օտարազգի արվեստագետների համար:

Սահմանելով իր գործունեության երեք հիմնական առաջնային ուղղությունները՝ **Ժամանակակից արվեստ, Կատարողական արվեստներ, Երաժշտարվեստ**, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը համախմբում է նշված բնագավառներում գործող մասնագետներին և ոլորտների շահառուներին (աշակերտներ, ուսանողներ, արվեստագետներ, մեծահասակներ, արվեստի սիրահարներ, սահմանափակ կարողություններով մարդիկ):

Կարևորելով ժամանակակից արվեստի, կատարողական արվեստների և երաժշտարվեստի դերն ու նշանակությունը հասարակության գեղագիտական ճաշակի ձևավորման և կերտման հարցում՝ կենտրոնն ապահովում է նշված ոլորտների ուսումնաստեղծագործական հարթակների հասանելիությունը՝ դրանք հիմնականում կենտրոնացնելով Սարյան փողոցում:

Արդյունքում ստեղծում է գեղագիտական որակներով տարբերվող յուրօրինակ կրթամշակութային մի տարածք, որի կիզակետում կհանդիպեն ինչպես ոլորտի մասնագետները, այնպես էլ արվեստի սիրահարները՝ միահյուսելով ավանդական և ժամանակակից ձևամտածողությունները:

Հիմնավորումներ ներդրումներ ներգրավելու և կոմերցիոն ծրագրեր իրականացնելու վերաբերյալ

Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի շենքային, վարչատնտեսական հենքը բավականին ընդարձակ է, ինչը հնարավորություն է տալիս, արդյունավետ կառավարման պարագայում, շահեկանորեն ակտիվացնել դրանց կիրառումը՝ ակնկալելով լրացուցիչ ներդրումներ կենտրոնի կարիքները հոգալու և նոր մեծամասշտաբ նախագծեր իրականացնելու նպատակով:

Նոր ստեղծվող «ԳԱԿ թանգարանի» և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ենթակայությամբ գործող ուսումնաստեղծագործական արվեստանոցների հարթակները վարձակալությամբ կտրամադրվեն այլ կազմակերպությունների և հաստատությունների, որոնց առաջարկած նախագծերն իրենց բովանդակությամբ և նպատակայնությամբ համահունչ կլինեն կենտրոնի որդեգրած գաղափարախոսությանը:

Կենտրոնն ակտիվ համագործակցություն կմեկնարկի Հայաստանում գրանցված դեսպանատների, դիվանագիտական կորպուսի, միջազգային կառույցների հետ: Այդ համատեքստում կիրականացվեն նպատակային տարեկան միջոցառումներ, ինչպես նաև միայն նշված հաստատությունների համար «փակ» ձևաչափով հավաքներ:

Մասնավոր խոշոր կազմակերպությունների, օրինակ բանկային և հեռահաղորդակցության ոլորտում գործողների, համար կպատրաստվեն հատուկ առաջարկ-փաթեթներ, որոնց շրջանակում հնարավոր կլինի իրականացնել ցուցահանդես-վաճառքներ, Ամանորյա տոնավաճառներ, թեմատիկ հուշանվերների

տպագրություն և վաճառք, որի հասույթն էլ կուղղվի նախապես ընտրված նախագծի իրականացմանը՝ պարտադիր կերպով ապահովելով սոցիալական որոշ բաղադրիչներ:

Ընտանեկան ծրագրերի շրջանակում ընտանիքները վճարովի հիմունքով կենտրոն այցելելու, հանգստյան օրերին յուրատեսակ մշակութային ժամանցի կամ իրենց համար կարևոր տոներն արվեստի միջավայրում անցկացնելու հնարավորություն կունենան:

Այս և նման քայլերը նախ կնպաստեն Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի ճանաչելիության բարձրացմանը, այնուհետ նաև վերջինիս բարեկամների և հովանավորների շրջանակի ընդլայնմանը, ֆինանսական հոսքերի ներգրավմանը, ինչը, մեր կանխատեսմամբ, առաջին տարում կհասնի 20-25%: